**Արձանագրության 3**
**«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/74» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի**

ք.Երևան09.03.2020թ.

ժամը՝ 09:30

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Գասպարյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Հ. Մարտիրոսյան /գնահատող/, Հ. Թորոսյան /գնահատող/, Ս. Սողոմոնյան /բացող/, Ա. Կարապետյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Եղիազարյան

**1. Անհամապատասխանությունը շտկելու մասին**

---

(Ա. Գասպարյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ մասնակցի կողմից իրավերով սահմանված ժամկետում շտկվել է հայտում առկա անհամապատասխանությունը և գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է բավարար:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:*

**2. Բանակցությունների անցկացման անհրաժեշտության մասին**

---

(Ա. Գասպարյան)

2.1 Գանահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերությունը, համաձայն որի՝ հայտերի բացման նիստում՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ **եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը** կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա» որոշեց նիստը կասեցնել է, և հանձնարարել գնման ընթացակարգի քարտուղարին մեկ աշխատանքային օրվա ընթացքում բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

2.2 Քանի որ առաջին և 2-րդ չափաբաժինների մասով **Էլլիպս Ջի Էյ ՍՊԸ-ի** կողմից ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են մեր կողմից սահմանված գները, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեցգնման ընթացակարգը կասեցնել մինչև բանակցությունների նպատակով հրավիրված հանձնաժողովի նիստ, և ծանուցել մասնակցին գների նվազեցման շուրջ հրավիրված բանակցությունների անցկացման մասին, որը տեղի կունենա **11.03.2020թ. ժամը 11:30**-ը:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

**3. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին**

---

(Ա. Գասպարյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել **11.03.2020թ. ժամը 11:30**-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ 321 սենյակ հասցեում:

***Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:***

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի Նախագահ՝ | ------------------------ | Ա. Գասպարյան |
| | ------------------------ | Հ. Մարտիրոսյան |
| | ------------------------ | Հ. Թորոսյան |
| Անդամներ՝ | ------------------------ | Ս. Սողոմոնյան |
| | ------------------------ | Ա. Կարապետյան |
| Համակարգող՝ | ------------------------ | Ս. Եղիազարյան |